ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1328-Ա «05» ապրիլի 2024 թ.

ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽԻ Հ.Հ.85 ԵՎ 86 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Անաստաս Սամվելի Ղազարյանի լ/ա Սամվել Անաստասի Ղազարյանի դիմումը՝ Ներքին Չարբախի հ.հ.85 և 86 հողամասերի (վարելահող) սահմանները ճշտելու և հատակագծեր թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել 2011 թվականի դեկտեմբերի 6-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.6294 վկայագիրը, «Հայաստանի Ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 20.02.2024թ. հ.Հ-1553 և 21.03.2024թ. հ.Հ-1553 արխիվային տեղեկանքները, Սամվել Գրիգորի Ղազարյանին 25.12.1995թ. տրված հողի օգտագործման իրավունքի հ.Ա039477 պետական ակտը, հողի օգտագործման իրավունքի ժամանակավոր վկայականը:

Տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հ.85 հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 992.20քմ, հողի սեփականության իրավունքի հ.Ա039477 պետական ակտում ամրագրված՝ 1000.0քմ մակերեսի փոխարեն, իսկ հ.86 հողամասինը՝ 3400.0քմ, ինչը որ ամրագրված է ակտում:

Քննարկվող հողամասերն ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, գտնվում են ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 11-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 25.12.2023թ. հ.Դ-156018-23 եզրակացությունը, Անաստաս Ղազարյանի 27.03.2023թ. գրավոր համաձայնությունը.

1.Սահմանել, որ Ներքին Չարբախի հ.հ.85 և 86 հողամասերի (վարելահող) սահմանները որոշվում են 992.20քմ և 3400.0քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ